



ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ԿՅԱՆՔ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ

ՆՅՈՒ-ՅՈՐԲ. 17 հունիսի (ՏԱՍՄ).— Հայերի իրավունքների պաշտպանության Ամերիկյան կոմիտեն և Ամերիկայի հայ ազգային խորհուրդը ճաշկերույթ են կազմակերպել, որտեղ քննարկվել է ամբողջ աշխարհում սփռված մեկ ու կես միլիոն հայ գաղթականների անուանից Միավորված Ազգությունների կազմակերպությանն ուղղված դիմումը, որով պահանջվում է Թյուրքիայի դավթած հայկական նահանգները վերամիավորել Սովետական Հայաստանին: Ծաշկերույթին ներկա էր ավելի քան 800 մարդ:

Ծառով հանդես է եկել ամերիկյան հայտնի պրոֆեսոր Չեմբերսը, որը հայտարարել է. «Այն բոլորը, ինչ որ մենք խնդրում ենք, դա Թյուրքիայի կողմից առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո զավթված շրջանները Սովետական Հայաստանին վերադարձնելն է: Այդ շրջանների հայերը, որոնք սփռված են ամբողջ աշխարհում, պատրաստ են այժմ ամեն րոպե վերադառնալու Հայկական ռեսպուբլիկայի հետ վերամիավորվելիք այդ շրջանները»:

Ծաշկերույթի նախագահությունը տղույններ է ստացել սենատորներ Սալտոնստելից, Միդից, Սմիտից, Դաունից, Պիլգորից, Գրիչից և ներկայացուցիչների պալատի անդամ Դինգելից:

Ծաշկերույթում ընդունված բանաձևում ասված է. «Քանի որ Թյուրքիայի կողմից զավթված և մինչև այժմ իր ձեռքում պահած

հայկական մի քանի նահանգները վերադարձնելու մասին Վուդրո Վիլսոնի 1920 թվի ընդունած որոշումը Ազգերի լիգայի կողմից չի կատարվել, քանի որ հարյուր հազարավոր հայեր այլ երկրներում ապրում են գաղթականի դրության մեջ, այն ժամանակ, երբ հայկական ռեսպուբլիկան կարող է ընդունել նրանց, քանի որ Միավորված Ազգերի կազմակերպությունը ստեղծված է բոլոր ժողովուրդների իրավունքները պաշտպանելու համար և քանի որ ամերիկյան կառավարությունը վաղուց ի վեր բարեկամաբար է վերաբերվում հայ ժողովրդին ու հայ ազգին, Հայերի իրավունքների պաշտպանության Ամերիկյան կոմիտեն, արտահայտելով հայ ժողովրդի հույսը, դիմում է Միավորված Ազգերի կազմակերպությանը, խնդրելով անհապառ համակարգառ լուծել հայկական հարցը՝ Չարսը, Արդահանը, էրզրումը, Տրապիզոնը, Վանը, Բիթլիսը ներկայիս Հայկական Սովետական Ռեսպուբլիկայի մեջ մտցնելու միջոցով: Սա կապում է պրեզիդենտ Վիլսոնի չիրագործված որոշման մի մասը»:

Բանաձևն ուղարկված է Միավորված Ազգերի կազմակերպության ամերիկյան դելեգացիային՝ այդ կազմակերպությանը հանձնելու համար:

Նման ճաշկերույթներ տեղի են ունեցել Ֆիլադելֆիայում, Պրովիդենսում, Բոստոնում, Դետրոյտում և Չիկագոյում:

ՀԱՅԵՐԻ ՄԻՏԻՆԳ

ՆՅՈՒ-ՅՈՐԲ. 3 հուլիսի (ՏԱՍՄ).— «Նյույաթերթը» հաղորդում է, որ հուլիսի մեկին «Հայերի իրավունքների համար պայքարող ամերիկյան կոմիտեն» նախաձեռնությամբ Դետրոյտում տեղի է ունեցել միտինգ, որտեղ ներկա են եղել հայկական ծագում ունեցող հազար ամերիկացիներ: Միտինգում

ԴԵՏՐՈՅՏՈՒՄ

միահամուռ կերպով որոշում է ընդունվել դիմել Միավորված Ազգերին՝ խնդրելով «կարգավորել հայկական հարցը Թյուրքիայի կողմից խլված շրջանները Սովետական Հայաստանին վերադարձնելու միջոցով»:

Դետրոյտում արտաքին քաղաքականության ասոցիացիայի նախագահ Լիվադարտը

ՖԻԱՆՍԱԶԱՅԵՐՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄՈԼՈՏՈՎԻՆ

Խորին զերազանցություն և վճԱՋԵՍԼԱՎ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՄՈԼՈՏՈՎ
Արտաբիեն Գործերու Մինիստր ՍՍՌ Միությանը

Պարոն Մինիստր,

Օգտվելով Ձեր Փարիզ ներկայութենեն, Ազգային Ճակատի Կազմակերպությունս պատիվն ունի Ֆրանսահայ գաղութի անունից բարի գալուստ մաղթելու Ձեզ և միանգամայն կցանկա կատարյալ հաջողություն Ձեր աշխատանքներուն:

Այս օրերուն, երբ մարդկությունը և անոր թվին ամբողջ հայությունը, աչքերը հառած է Փարիզ՝ Չորս Մեծ Պետությունց Արտաքին Գործոց Մինիստրներու ժողովին, Խորհրդային Մեծ անպարտելի Միության ներկայացուցիչը, ներկայությունը անխախտ հույս կենըշնչե մեր ժողովրդին՝ թե ինչպես որ, շնորհիվ Ռուս մեծ ժողովրդին ստույգ կորուստե փրկվեցավ հայ ժողովրդի մեկ մասը հանձին Սովետ Հայաստանի, դարձյալ շնորհիվ Սովետ Միության կիրականանա հայ ժողովրդի դարավոր երազը եղողը, թուրքերու կողմից վայրագորեն հափշտակված, իր արյունով ողողված պապենական հողերու կցումը Սովետ Հայաստանին:

Այսպիսով նաև աշխի լայն հնարավորություններ կտրվին գաղթաշխարհի տարագիր

հայության մեր սիրելի Սովետական Հայաստան դարձին:

Մենք անհամբեր կսպասենք այն բախտավոր օրվան, երբ պիտի արժանանանք ՍՍՀՄ-ՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԻ ամենաբարձր կոչումին:

Հավետ երախտապարտ ենք և մեր անկեղծ զգացումները կհայտնենք ժողովուրդներու Մեծ առաջնորդ ժեներալիսիմուս ՍՏԱԼԻՆԻ և Ձեզ՝ անոր ամենամոտիկ զինակորին, ՎՅԱՋԵՍԼԱՎ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ, և ազնիվ Ռուս մեծ ժողովուրդին:

Որչափ կփափաքինք տեսակցություն ունենալ Ձերդ Ազնվության հետ. մեծապես երախտապարտ պիտի ձգեք ընդունելով մեզ: Հնդունեցեք, Պարոն Մինիստր, մեր ամենախորին հարգանաց հավաստիքը:

Ֆրանսահայ Ազգային Ճակատի

Նախագահ՝ Հ. ՄԱՐՄԱՐՅԱՆ

Քարտուղար՝ Մ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

1946 թ. մայիս

(«Ժողովուրդի ձայն» թիվ 1144)

ՖԻԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԹՅՈՒՐԲԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԽԼՎԱԾ ՄԱՐԶԵԲԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՓԱՐԻՉ. 7 հուլիսի (ՏԱՍՍ).— Ֆրանսայի գործակալության հաղորդագրությամբ ֆրանսիական մի խումբ գործիչներ, որոնց թվում Ալբեր Վայեն, էմիլ Բյուրեն, Մարսել Կաշենը, ժյուստեն Գոգարը, Պոլ Լանթենը, Ժան

Ռիշար Բուկը, դիմել են Միավորված Ազգերի ներկայացուցիչներին, կոչ անելով վերամիավորել Սովետական Հայաստանի հետ Թուրքիայի խլած մարզերը:

ՀԱՅԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻՑ ԴԵՊԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԵՅՐՈՒԹ, 10 հուլիսի (ՏԱՍՍ).— Հուլիսի 10-ին Բեյրութի նավահանգստից «Տրանսիլվանիա» շոգենավով մեկնեց հայրենադարձ հայերի երկրորդ խումբը՝ թվով 1800 մարդ: Իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստան

տան մեկնողներին ճանապարհ գցելու դուրս էին եկել ջատ լիբանանցիներ և մնացող հայերը, որոնք սպասում են իրենց հերթին՝ վերադառնալու համար:

ՄԻ ԽՈՒՄԲ ՀԱՅԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻՑ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻՑ ՍՍՌ-Ս

ԲԵՅՐՈՒԹ, 12 հուլիսի (ՏԱՍՍ).— Սովետական «Ռոսսիա» շոգենավը Բեյրութի նավահանգստում իր վրա է ընդունել Լիբանանից և Սիրիայից Սովետական Հայաստան մեկնող 2.300 հայերի: Հուլիսի 12-ին շոգենավը մեկնել է Բեյրութի նավահանգստից: Նավը

մեկնելու պահին ծովափում հավաքվել էին ավելի քան 5.000 ճանապարհորդներ: Շոգենավի ուղևորների մեջ տիրում էր հսկայական ոգևորություն: Շոգենավը նավահանգստից մեկնել է Սովետական Հայաստանի Հիմնի հնչյունների տակ, որ երգում էին մեկնողները և նրանց ճանապարհող անձինքը:

ՀԱՅԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Քուխարեստ, 21 հուլիսի (ՏԱՍՍ).— Հուլիսի 19-ին Քուխարեստում տեղի ունեցավ փառաբանողների հանդիսավոր հանձնում Սովետական Հայաստան մեկնող 1.100 հայերի, Հանձնման արարողությունը վերածվեց Քուխարեստում հայկական ամբողջ գաղութի իսկական տոնի:

Փաստաթղթերը հանձնելուց առաջ տեղի ունեցած միտինգում ելույթ ունեցավ «Հա-

յաստանի ճակատ» կազմակերպության նախագահ Դանիելյանը, որը հայտարարեց. «Արտասահմանյան հայերը պատմական օրեր են ապրում, նրանք նորից հայրենիք են ձեռք բերել: Հայ ժողովրդի ծննդյան իսկական օրը կարելի է համարել այն օրը, երբ ծնվեց Սովետական Հայաստանը»:

ԿԱՐՑ ԼՈՒՐԵՐ

Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսին Հալեպ այցելության ի պատիվ տեղվում Մոհաֆըզը Տքտ. Իհսան պեյ Շերիֆ տված է ճաշկերույթ մը, որում ներկա եղած են հայ և արաբ պաշտոնատար անձնավորություններ: Վեհափառին ժամանումին առթիվ քաղաքին դրամատուները կես օրին փակված են, իսկ դպրոցները երկու օր:

Հարավային Ամերիկա, Մոնթեվիդեոյի կո-

շիկի հայ գործարանատերերը 3000 զույգ կոշիկ տրամադրած են Հայաստան դրկելու համար:

Հայաստանի կոշիկի գործարան մը նվիրելու համար Սուրիա-Լիբանանի կողմից, հանդանակությունը տված է հետևյալ արդյունքը. Լիբանան՝ 55.000, Դամասկոս՝ 10.000, Հալեպ՝ 100.000 ս. ոսկի:

(«Արաբ» ապրիլ 13 1946 թ.)

ՄԻՐԱՆՈՒՇԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Անցյալ կիրակի առավոտ ժամը 11-ին Դահիերի աղբային դերեզմանատան մտավորականներու թաղին մեջ կանգնուած անմահ դերասանուհի տիկին Սիրանուշի հուշարձանին բացումը կատարվեցավ մեծ շուքով, նախագահությամբ Գերշ. Մամբրե Արքեպիսկոպոսի և ի ներկայության խոռոմ բազմության: Հուշարձանի բացման խոսքեն հետո սրբազան Հայրը խոսք առնելով թվեց մի առ մի տիկին Սիրանուշի հայ բեմին մատուցած թանկագին ծառայությունները Կովկասեն մինչև Եգիպտոս: Անդրադարձավ նաև հայ-

կական թատրոնին և անոր գործիչներուն և օրհնելով հիշատակը տիկին Սիրանուշի, վար առնելով սև քողը բացված հուշակեց հուշարձանը:

Ինչպես ծանոթ է ողբացյալ դերասանուհին թվականես ճիշտ 12 տարիներ առաջ Դահիերի հիվանդանոցին մեջ կիսակեր իր աչքերը, երբ պատրաստություններ կտեսնվեին տունելու Սիրանուշի բեղուն գործունեության հիսնամյա հոբելյանը, բայց անգույթ մահը արգելք հանդիսացավ անոր:

(«Արաբ» մայիս 4 1946 թ.)

ՀԱՅԱԿԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԸ ԱՆԱՏՈՒՈՒ ՄԵՋ

Վերջին քանի մը տարիներու ընթացքին կանոնական ծառայության բերումով առիթն ունեցանք շրջելու Անատոլիոյ զանազան վայրերը, ուր հանդիպեցանք կոկիկ թվով հավաքականություններու: Անոնք առհասարակ հողագործ, մանր արհեստավոր և խանութպան են:

Առհասարակ թրքախոս են, սակայն ընտանեկան շրջանակներին ներս կապահան իրենց ավանդությունները ու սովորությունները և կմնան սերտիվ կապված իրենց եկեղեցիին:

Ամեն անգամ որ առիթը ներկայացավ ըրիում ունենալու այս հայ ընտանիքներուն հետ, հուզումով տեսանք, թե անոնք իրենց տան ամենեն հարգի անկյունը զետեղած են սփռնած և պատուած ժամագիրք մը կամ մաշած ու դալկահար Ավետարան մը, զոր հաղիվ թե կրնան կարդալ ու հասկնալ:

Հանդիպեցանք նույնպես դեռատի Գրիգորներու, պատանի Մելքոններու կամ նորահաս Օվսաննաններու, որոնք ի տես իսթանպուլցի Կարապետի մը կամ Լևոնի մը, երանության հառաչանքը իրենց շրթերուն:

հազիվ թե «ախպարիկ» մը կթոթովեն, կարծես ամոթահար։ Ասոնց մեջ, մեր Առաքելական եկեղեցիին ամենեն նվիրական խորհուրդեն՝ մկրտութենեն զրկված մնացողներուն թիվը հետզհետե շատանալու վրա է։ Հոգվածագիրը հետո կավելցեն, թե Սվասի, Սմասիո, Թոքատի, Անգարայի, Եոզկատի,

Գոնիայի, Խարբերդի և Մալաթիո մեջ ապրող հայերը քահանա մը իսկ շունին և իրենց կը բռնական գոյությունը կպահեն շնորհիվ իրենց զորավոր հավատքին և հին ավանդություններուն։

(«Լրաբեր» ապրիլ 23 1946 թ.)

Լ Ո Ն Տ Ո Ն Ի

Հ Ա Յ Ե Ր Ը

Լոնտոնի 700 քառակուսի մղոն տարածության վրա և 9 միլիոն բնակչության կողքին 500-ի շախ հայություն մը ունինք։ Հայկական կյանքը կաղմակերպված չէ։ Նվ մեր «սիսիկատուն» տիկիներն ու պարոնները «պրիճ»-ի սեղաններուն շուրջ կանցնեն իրենց պարապո ժամերը։

Գաղութին սարքած հանդեսներուն և թեյանդաններուն ծախքերը պ. Գ. Կուլպենկյանը կզոցե։ Բարեգործականը քանի տարի է ի վեր ամլության դատապարտված էր։ Միայն քանի մը ամիս եղավ, որ փորձեցին դաշն վերակենդանացնել։ Հայ եկեղեցին իր ծախքերը կատահովի մեծահաստատ հիմնադրին գումարներով։ Այս հիմնադիրը մինչև իսկ «չեն և պայծառ մնաց»-ի մուրացկանությունը վերցնել տվեր է եկեղեցիեն ներս։ Նույնիսկ եկեղեցիին բակը օրացույց և ալն ծախելն իսկ արգելված է։

Այս հայերը հետևյալ բաղադրերեն են ընդհանրապես, Պոլիս, Իզմիր, Տիգրանակերտ,

Վան, Անթապ, Խարբերդ, Թեհրան, Գահրե, Բաքու, Սիեկապուր։ Հնդկահայերը կամ դարբար կխոսին կամ անգլերեն։

Գաղութին ընդհանրապես գորգի և մուշտակի առևտուրով կզբաղի։ Արդեն հայերն են որ 60 տարիներ առաջ, գորգի վաճառականությունը ներմուծած են Անգլիո մեջ։

Նշանավոր քանի մը դեմքեր կան։ Արշակ Բաթթի որ ուսերեն կավանդե Լոնտոնի համալսարանին մեջ։ Սարգիս Թոփալյան, որ պարսկերենի և թրքերենի դասախոսն է Արևելյան լեզուներու դպրոցին մեջ։ Նրի տասարդներեն հիշելու է Նուպար Էքսերճյան, որ տաղանդավոր տնտեսագետ մըն է և որ զնդապետի աստիճան ունի անգլիական բանակին մեջ։ Ֆելիքս Աբրահամյան, որ երաժշտական քննադատ է։ Էրիք Տիրացու թվաբան և հանքային ճարտարագետ, որուն դիտական հոգվածները քարյուղի արտադրության մասին, հիացման առարկա են։

(«Լրաբեր» ապրիլ 23 1946 թ.)

ԼՈՒՐԵՐ ԿՍԼԿՍԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Լոս Անճելոսեն ընկեր Մեզլում Մեզլումյան, ծովային աշխատավոր մը, որ հունվար ամսին Կալիաթա եղած էր, իր վերադարձին Նյու-Յորք «Լրաբեր»-ի խմբագրության հանդիպելով, մեզ հաղորդեց, թե Կալիաթայի հայերը մեծապես շահագրգռված են Սովետ Հայաստանով և էջմիածնով։

Վերջերս կալիաթահայերը նվիրահավաքության մը սկսած են էջմիածին ուղարկելու համար եկեղեցական զգեստներ։

Ընկ. Մեզլումյան կըսե, թե Կալիաթայի հայերը մեծ մասամբ անգլերեն կխոսին և իրենց ընկերային ուրույն կյանքը տանին և

ընդհանրապես համախմբված են եկեղեցիին շուրջ։

Կալիաթայի հայոց թիվը կհասնի 5 հազարի, որոնցմե մոտ 3.000 հոգի հին գաղթականներ են։ Գաղութին մեջ մեծ ոգևորություն կա Սովետ Հայաստան վերադառնալու համար։

Կալիաթայի մեջ կան Հայկական քոլեճ մը և միջնակարգ դպրոց մը, ուր դասավանդություններ կոլլան անգլերենով և հայերենով։ Քաղաքական կուսակցություններ գոյություն ունին և ժողովուրդը միասնական է։

(«Լրաբեր» մարտ 2 1946 թ.)

